ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2019թ. հունվարի 22-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի Vա դասարանի ծնողական ժողովը: Ծնողական ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Թամարա Սամսոնյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում:

2.Ընթացիկ հարցեր (կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

1.Լսեցին.- I կիսամյակի առաջադիմության արդյունքների ամփոփման հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Թ. Սամսոնյանը՝ նշելով, որ I կիսամյակում Vադասարանում սովորել են 20 աշակերտներ: Սովորողները կիսամյակի ընթացքում եղել են ակտիվ, քիչ են բացակայել: Դեկտեմբերին տրվել են տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ մայրենիից և մաթեմատիկայից: Արդյունքները գոհացուցիչ են:Դասարանում սովորողների առաջադիմությունը 95% է, որակական ցուցանիշը՝ 50%, բացակայությունը՝ 136 ժամ: Դասարանում կան 1 գերազանցիկ՝ Նելլի Խաչատրյան, 9 հարվածային աշակերտներ՝ Անուշ Բաղալյան, Մարիամ Խաչատրյան, Միլենա Համբարձումյան, Միլենա Հովակիմյան, Նարեկ Հովհաննիսյան, Նաիրա Հովսեփյան, Լիանա Մանուկյան, Կարինե Մարտիրոսյան , Անի Սարգսյան և 1 աշակերտ՝ Աղասի Նավասարդյանը երկու առարկայից (անգլերեն, գերմաներեն) ունի անբավարար գնահատական: Յուրաքանչյուր ծնողի ներկայացվեց իր երեխայի առաջադիմությունը: Տեղեկացան, թե ինչ թերացումներ կան աշակերտների մոտ: Ամփոփվեցին I կիսամյակի գնահատականները:

Որոշեցին.- Ավելի ուշադիր և հետևողական լինել երեխաների ուսման հարցում: Այն ծնողները, ում երեխաներն ունեն որոշ թերացումներ,

որոշեցին ավելի շատ համագործակցել ուսուցիչների հետ, տանը ավելի շատ աշխատել երեխաների հետ, որպեսզի վերացնեն բացթողումները :

2.Ընթացիկ հարցեր (կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

2.Լսեցին- Ընթացիկ հարցեր (կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

Դաստիարակը հորդորեց հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ երեխաները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով, օրագրերով, դպրոցական համազգեստով: Ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն դպրոցում: Պահել ծնող-դաստիարակ-աշակերտ կապը:

Որոշեցին-Առավել ուշադիր և հետևողական լինել , որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ / Լիլիթ Պապյան /

Քարտուղար՝ / Լիլիթ Թադևոսյան /